խարճ արարին ընդ Ե եկեղեցոյն, եւ զկնքեալ Ե եկեղեցոյ աթոռակալացն թուղթ մօհրեցին եւ վարդապետքն, և առեալ գնացին, բացին զեկեղեցին, յորդորեցին զժողովուրդն գալ յաղօթս։ Եւ գային ցըրուեալքն ամենայն, զի ոչ մօտէին չարքն այնոքիկ եւ աշխարհական աւերքն աշխարհի։ Եւ իրիցունքն եղբայրօրէն միակամ եւ միախորհուրդ՝ ի մէջ Ե–ից եղբարց լինէր ամենայն իրաւունք եւ հասկ եկեղեցոյն, և վճարէին ահա սակաւ սակաւ զպարտսն և էր յաւուր յարութեան Ղազարու, որ եւ այգուցն Ծաղկազարդ։

Այսքան զոր ծրեցի ի Զատկէն մինչեւ ցԶատիկս ի կատարումն տարւոյս փոքր ի չատէ, եթէ գտանիցէք սղալ պակաս և յաւել՝ ներումն առնել աղաչեմ։ Եւ մի կարծիցէք նախանձ եւ կամ աչառ ի մի կողմն, այլ զերկուցն զպատճառ եդի՝ թէ՛ նուազագոյն և թէ բազմապէս, որպէս և տեսերդ, ողջ լե՛ր եթէ հաճելի ի՛ցէ ամէնիմաստ գիտութեան ձերում բացայայտութիւնս այս զտկարութենէս։

ՎԵՐՋ